ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 04

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **24. 01. 2024թ. ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Հ. Գույլան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ. Հովհաննիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Գևորգյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ա. Գրիգորյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Ռ. Թադևոսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Վ. Հարությունյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Մ. Դատումյանը	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Մարզի ուժային կառույցների ղեկավարներ,

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ,

Մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ,

Մարզի բժշկական հաստատությունների տնօրեններ,

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Մինչ ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի օրակարգային հարցերի քննարկումը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը ներկայացրեց ՀՀ Արագածոտնի մարզպետի նորանշանակ խորհրդական Վահե Հարությունյանին, որը բռնի տեղահանվել է Լեռնային Ղարաբաղից և այսուհետ կհամակարգի ԼՂ-ից տեղահանված և ՀՀ Արագածոտնի մարզում գտնվող մեր հայրենակիցների խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:
2. Մարզի համայնքների բյուջեների կազմման գործընթացի վերաբերյալ:
3. Մարզի համայնքներում 2023թ. ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ:
5. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
6. ՀՀ Արագածոտնի մարզում էներգաարդյունավետությանը և էներգետիկ ազատականացմանն ուղղված «Արագածոտն-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանի հիմնման ծրագիր:
7. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

8. Մարզում 2024թ. իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:
9. Մարզի բնակավայրերի մուտքի և ելքի ցուցանակների վերաբերյալ:
10. Մարզում 2023թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության վերաբերյալ:
11. Այլ հարցեր:

Լսեցին՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրումը 2023 թվականին իրականացվել է 105,8%-ով: Բարձր ցուցանիշներ են ապահովել Աշտարակ /106,1%/, Շամիրամ /300%/, Ապարան /101,6%/, Ալագյազ /107,2%/, Մեծաձոր /120,5%/, Արևուտ /100,7%/, Թալին /110,8%/ համայնքները: Ամենացածր ցուցանիշը Ծաղկահովիտ /88,6%/ համայնքինն է: Նշվեց, որ նախորդ տարվա համեմատ տարեկան հավաքագրումը այս տարի ավելացել է 5,2%-ով:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց համայնքների ղեկավարներին պատշաճ հավաքագրումը կազմակերպելու համար, առաջարկեց հավաքագրումը շարունակել նույն մեխանիզմով՝ ապահովելով հավաքագրման եռամսյակային պլանավորված ցուցանիշները, որպեսզի տարեվերջին ծանրաբեռնվածություն չլինի և ունենանք ցանկալի արդյունք:

2. Մարզի համայնքների բյուջեների կազմման գործընթացի վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

Ներկայացվեց համայնքների բյուջեի կազմման գործընթացի մասին տեղեկատվություն: Զեկուցվեց, որ 8 համայնքներից 7-ի բյուջետային փաթեթները ուղարկվել են ՀՀ կառավարություն, Ծաղկահովիտ համայնքինը ընթացքի մեջ է և սահմանված ժամկետում կուղարկվի: Նշվեց նաև, որ պետությունը ավելացրել է համայնքներին տրամադրվող գումարները: Դոտացիաների հաշվարկման, տրամադրման հիմքում նախորդ տարվա համախառն արդյունքն է: Ալագյազ համայնքի բյուջեն ավելացել է 62մլն դրամով, Աշտարակինը՝ 800մլն , Ապարանինը՝ 240մլն, Մեծաձորինը՝ 40մլն, Արևուտինը՝ 20մլն, Թալինինը՝ 500մլն, Ծաղկահովիտինը՝ 114մլն և Շամիրամինը՝ 7մլն դրամով:

3. Մարզի համայնքներում 2023թ. ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ
/զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ասատրյանը զեկուցեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի համաձայն՝ 2023 թվականի փետրվար ամսից մեկնարկած մարզի համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների 2003-2022թթ. ժամանակահատվածում ամենամյա չօգտագործված արձակուրդների տրամադրման գործընթացը շարունակական է: 2023 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների ընդհանուր գումարը կազում է 12,172,612 մլն. ՀՀ դրամ:

Մարզպետ Ս. Մովսիսյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ հետագայում տարեվերջյան ծանրաբեռնվածությունից խուսափելու համար, այսուհետ եռամսյակային կտրվածքով աշխատանքներն ամփոփել, և մարզի խորհրդի մյուս նիստի օրակարգում կրկին ընդգրկել հարցը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2021թ.-ից ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն՝ մեկնարկած համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքները շարունակվում են: 2021թ.-ին մարզի համայնքներում առկա գրանցում չունեցող 138 միավոր շենք-շինություններից մարզպետի աշխատակազմի աջակցությամբ և համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում մինչ օրս 126 միավոր շենք-շինություններ արդեն իսկ գրանցվել են և ունեն սեփականության իրավունքի վկայականներ: 24.01.2024թ. դրությամբ մարզի համայնքներում մնացել է ընդամենը 12 միավոր գույք, որոնք դեռևս գրանցված չեն: Գույքերի պետական գրանցում իրականացնելու համար անհրաժեշտ է հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն իրականացնել, 6-ը արդեն իսկ ներկայացվել են միջգերատեսչական հանձնաժողով, մյուսների գրանցման աշխատանքներն ընթացքի մեջ են:

5. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների շրջանակում իրականացվող «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրում ներառված Արագածոտնի մարզի 24 դպրոցների վերաբերյալ տեղեկատվություն, որոնք գտնվում են կառուցման կամ վերակառուցման, ինչպես նաև մրցութային գործընթացի փուլում: Նշվեց, որ անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրի շրջանակում կառավարության կողմից մարզում իրականացվող 17 ծրագրերից 15-ը ավարտված են, 1-ն ավարտական փուլում է, 1-ն աշխատանքների ոչ պատշաճ կատարման հետևանքով լուծարման փուլում է և պետք է նոր մրցույթ հայտարարվի: 2023 թվականին մարզպետի որոշմամբ մարզի դպրոցների բյուջեներից խնայված 247 մլն դրամը վերաբաշխվել է 105 ծրագիր իրականացնելու համար: Ընդհանուր խնայված միջոցներից 65 մլն դրամն էլ հատկացվել է դպրոցներում փոքր և միջին ծրագրերի իրականացման համար:

Մարզպետի կողմից խիստ կարևորվեց դպրոցաշինության ուղղությամբ կատարվող աշխատանքները: Անդրադարձ եղավ Օհանավանի միջնակարգ դպրոցին տրամադրված գույքի խնդիրներին, թերությունների շտկման ուղղությամբ տարվող աշխատանքներին: ***Հանձնարարվեց*** մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյանին խնդրի հետ կապված պարզաբանում-տեղեկանք ուղարկել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին:

6. ՀՀ Արագածոտնի մարզում էներգաարդյունավետությանը և էներգետիկ ազատականացմանն ուղղված «Արագածոտն-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանի հիմնման ծրագիր */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց Արագածոտնի մարզում էներգաարդյունավետությանը և էներգետիկ ազատականացմանն ուղղված «Արագածոտն-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանի հիմնման ծրագրի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ «ԱՐԱԳԱԾՈՏՆ-1» արևային այլընտրանքային ֆոտովոլտային կայանը նպատակ ունի Արագածոտնի մարզպետի աշխատակազմին և մարզպետի աշխատակազմի ենթակայության 118 դպրոցներին, 7 բուժհաստատություններին ապահովել էներգախնայող էլեկտրաէներգիայով՝ արդյունքում հասնելով նշված 126 կազմակերպությունների ֆինանսական միջոցների էական տնտեսմանը, ինչպես նաև էներգետիկ անկախացմանը: 1050 ԿվՏ հզորությամբ «ԱՐԱԳԱԾՈՏՆ-1» կայանը նախատեսվում է կառուցել ընդհանուր

6000 քմ տարածքի վրա: Ծրագրի ընդհանուր արժեքը 468 մլն դրամ է: Ծրագրի հետգնումը նախատեսվում է 5-6 տարի (66 ամիս): Ծրագրի շարունակականության ապահովման միջոցով նախատեսվում է մոտ ապագայում ունենալ նաև ոռոգման համակարգի աշխատանքն ապահովող 26 պոմպակայանների և 2 խորքային հորերի, պետական շենք-շինությունների էլեկտրաէներգիայի ծախսի էական կրճատում, էներգետիկ անկախացում, էներգետիկ անվտանգության բարձրացում և պետական միջոցների տնտեսում:

2023 թվականի ապրիլի 3-ին Արագածոտնի մարզպետի աշխատակազմում ՀՀ վարչապետի անցկացրած խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից ներկայացված «ԱՐԱԳԱԾՈՏՆ-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի գաղափարի և խորհրդակցության արձանագրության 3.3)3.7 կետի կատարումն ապահովելու նպատակով՝ մարզպետի հանձնարարականով ստեղծված աշխատանքային խումբն անկախ փորձագետների հետ միասին կատարել է ծրագրի հետ կապված աշխատանքը և ծրագրի ամբողջական փաթեթը 2024 թ. հունվարի 4-ի դրությամբ ուղարկվել է ՀՀ կառավարություն:

Հարցադրումներ եղան ծրագրի իրականացման ժամկետների, աշխատանքային խմբի, փորձագետների գործունեության և հնարավոր արդյունավետության վերաբերյալ: Կարևորվեց՝ ծրագրի իրականացման դեպքում առաջնահերթ ընդգրկել այն դպրոցները, որտեղ գազաֆիկացում չկա:

7. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2022 թվականին հաստատվել են Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրեր՝ ճանապարհաշինական, լուսավորության ցանց, շինությունների վերանորոգում, խմելու ջրագծերի և ոռոգման համակարգերի արդիականացում, գազաֆիկացում՝ ընդհանուր 4 017 898 801 ՀՀ դրամ նախնական արժեքով: 2022 թվականի 19 սուբվենցիոն ծրագրերից ավարտվել են 16-ը: Սուբվենցիոն 2 ծրագրով աշխատանքները ընթացքի մեջ են,իսկ 1 ծրագրի աշխատանքները դադարեցված են,որը համայնքի խնդրանքով տեղափոխվել է 2024թ:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 21 ծրագիր՝ ընդհանուր՝ 7 430 350 338 դրամ արժեքով: 2023 թվականին 13 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորման չափը կազմում է 1 515 121 100 դրամ:

Մարզպետի կողմից անդրադարձ եղավ Արտաշավանի նորակառույց մանկապարտեզի գույքի տրամադրման խնդիրներին: Մարզպետը առաջարկեց հետևողական լինել հարցի լուծման ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ, առաջարկվեց նախօրոք գույքի ձեռքբերման և պահեստավորման աշխատանքները կազմակերպել նաև մյուս վերանորոգվող մանկապարտեզներում:

Աշտարակի համայնքապետ Թ. Շահվերդյանի հավաստիացմամբ Արտաշավանի մանկապարտեզի խնդիրը կլուծվի մոտակա օրերին, և մարտ–ապրիլ ամիսներին մանկապարտեզը կսկսի իր գործունեությունը:

Մարզպետի կողմից կարևորվեց նաև այն սուբվենցիոն ծրագրերի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները, որտեղ խնդիրներ կան փորձաքննության, հայտարարված մրցույթների, համաձայնագրերի կնքման մասով: ***Մարզպետը հանձնարարեց***

մարզպետի տեղակալ Հ. Գուլյանին համակարգել այս ուղղությամբ տարվող աշխատանքները և խելամիտ լուծումներ գտել խնդիրներն արագ լուծելու համար:

8. Մարզում 2024թ. իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ հաստատվել է մարզի 6 համայնքներից ներկայացված 33 սուբվենցիոն ծրագրային հայտ՝ 12 208 736 420 դրամ ընդհանուր նախնական արժեքով: Սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է 6 սուբվենցիոն ամբողջական փաթեթ, իսկ երկու սուբվենցիոն ծրագրերի փաթեթ վերադարձվել է համայնք՝ լրամշակման:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց սերտորեն աշխատել համայնքների հետ, մեթոդական աջակցություն ցուցաբերել, որպեսզի համայնքները կարողանան սահմանված ժամկետներում ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի փաթեթները՝ հաշվի առնելով իրենց ֆինանսական հնարավորությունները:

Շամիրամի համայնքապետի կողմից առաջարկ հնչեց Շամիրամում խորքային հորի անհրաժեշտության վերաբերյալ, որի կարգավորման ուղղությամբ մարզպետն առաջարկեց առանձին քննարկում կազմակերպել: Մարզպետի կողմից կարևորվեց հատկապես ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրների առաջնահերթությունը և տրամադրվող աջակցությունը:

9. Մարզի բնակավայրերի մուտքի և ելքի ցուցանակների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/* :

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող բնակավայրերի ցուցանակների պատշաճ տեսքն ապահովելու նպատակով՝ կապալառու ընկերությունների կողմից 2023թ.սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են 18 բնակավայրերի ցուցանակների փոխարինում նոր ցուցանակներով, իսկ 32 ցուցանակ թարմացվել է և բերվել պատշաճ տեսքի: Համայնքների հետ համատեղ իրականացվում են բնակավայրերի միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների բնակավայրերի ցուցանակների գույքագրման աշխատանքներ: Միջպետական, հանրապետական նշանակության ավտոճանապարհների մասով տեղեկատվությունը կտրամադրվի ՏԿԵ նախարարությանը, իսկ տեղական նշանակության ճանապարհների մասով ՀՀ մարզպետի աշխատակազմը կիրականացնի համապատասխան աշխատանքներ:

Մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Միլադա Հովհաննիսյանին, որպեսզի մինչև հաջորդ մարզի խորհրդի նիստը բոլոր ցուցանակները թարմացված լինեն, պատշաճ տեսք ունենան: Հանձնարարեց այդ աշխատանքները արագ կազմակերպելու մեխանիզմներ մշակել:

10. Մարզում 2023թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության վերաբերյալ */զեկուցող՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Յու. Ազատյան/*:

/Զեկույցը կցվում է/:

Տեղեկատվություն ներկայացվեց ՀՀ Արագածոտնի մարզում 2023թ. գյուղատնտեսական մթերքների արտադրության վերաբերյալ /հացահատիկ և հատիկաընդեղեն, կարտոֆիլ, բանջարեղեն, պտուղ-հատապտուղ, խաղող, խոտ/: Նշվեց, որ ցանքային տարածությունը 2023 թ.-ին կազմել է 23296,8հա: Այս տարի առանց պետական ծրագրի իրականացվել է 4888 հա ցանք: ՀՀ Արագածոտնի մարզում 2023 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից կնքվել է 542 պայմանագիր՝ 996 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար: 2023 թվականին ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 324 ապահովագրական հատուցում՝ շուրջ 663 մլն ՀՀ դրամի չափով:

Մարզպետ Ս. Մովսիսյանը կարևորեց գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական ծրագրերը, հարցադրումներ կատարեց մարզում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի 2023 թվականի արդյունքների վերաբերյալ: **Հանձնարարվեց** իրականացնել այցելություններ, դասընթացներ, խորհրդատվություն, մեթոդական աջակցություն, որպեսզի քաղաքացիներն իրազեկված լինեն բոլոր պետական ծրագրերի մասին: Հանձնարարվեց նաև հավաքագրել ու արձանագրել բոլոր այն խնդիրները, որոնք ունեն քաղաքացիներն այս ծրագրերին ընդգրկվելու ընթացքում:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ հորդորելով շարունակել համատեղ արդյունավետ աշխատանքները:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝

Սերգեյ Մովսիսյան